Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

plim-74
282
283
284
285
286
287

910.4
1-15

no. 750
p. 210

2004

ԿԱԶՄԱԿԵՐՊԱՐԱՆ Ա. ՊԱՂԴԱՆՈՅՇ
ATELIER DE RELIEUR
A. PAGHTANOUCH
Tchakmakdjilar beyuk yéni han 5-6
Չախմախճիլար Մեծ Նոր խան թիւ 5-6

ԺԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ

Տ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԲԱՀՈՆԱՑԻ

ՎԱՂԱՐԾԱԿԵՐՏՑԻՈՑ

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՍ ՃԷՋՎԷՃԵԱՆ
ԵՈՒՍՈՒՖԵԱՆԽԱՆ ՎԵՐԻ ՑԱՐԵԳԻՒ 12
— 1870 —

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԹՈՒԹԻՒՆ

Տ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԱՀԱՆԱՅԷ

ՎԱՂԱՐԾԱԿԵՐՏՅՈՅ

Ի ՍԱՀՄԱՆՍ ԲԱՐՁՐ ՀԱՅՈՑ

ՀԱՏՈՐ Ա.

Ի. ՊՈՂՈՍԻ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՍ ՃԷԶՎԷՃԵԱՆ

—1870—

13287 Բ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Տ. Տ. ԳԵՈՐԳԱՅ Ս. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ
Տ. ԽՐԻՄԵԱՆ ՄԿՐՏՉԻ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
Կ. ՊՕԼՍՈՅ

Ա 287
287-2016

Մեծապատիւ տէր . . .

Ընդհանուր մարդկային սեռի սրտից վերայ երեք մեծ ըստանչելիք կայ որ վսեմ ազդեցութիւն կանէ (կրօնք . ազգ . և Հայրենիք) որոց սիրոյն համար կը թափին սրբատահառաջ արտասուաց աղի կաթիլներ շատ անգամ ընտիր ընտիր երիտասարդաց՝ և քաջ ախոյեան ճակատամարտից վարպետին արեանց հոսմունքով դեռերու յորձանքերն՝ և դաշտերու սեւաթոյր հողերն կ'ներկուին՝ և անդուք արոյն զոհ եղած աշխարհիս երեկոյնական մթաստա և ցաւադին բլրակէն սահելով յախուռն բազմութեամբ խումբ առ խումբ յաւիտենականութեան ցուրտ անդունդին մէջ և անոր անհուն հոսանաց ներքեւն անհետացեալ կը ծածկուին ինչպէս կը տեսնանք հայոց ազգին վերայ՝ որ իրենց Սրբազան կրօնք . ազգն . և հայրենիքն պաշտպանելու նպատակաւ պարսից անաստուածից անիրաւ հրապուրանաց չը կաշկանդուելով հաստահիմն շինուածոց պարսպներն՝ աւերակաց դերքուվներ ձգեցին և բաղմադարեան կսկծագին խոշտանգանաց ենթակայ եղած, իրարմէ բաժան, թափառ, և տատան երկրիս քառածագ ոլորտներու մէջ բնակեցան, կերեւի թէ տիկա մեզի երկնառաք պատգամ, և սրբազան պատուէր մնէ որ երկինքը իրեւ անմահ ճակատագիր դրոշմերէ մեր բնութեան ճակտին վերայ, ուստի ամեն ազգ և ամեն լեզու միահամուռ խոստովանութեամբ կը խոնարհին այս լծոյն ներքեւ և ես ալ այս խոստովանողներէն մէկն ըլլալուն, և իմ հայրենակցացս դառն բաժակը չը կրնալ քամելուն ծաղկոտան գաւառի Եփրատայ սառուցիկ ակերքներէն 'ի Կարին պանդխտածս ժամանակ ըստ չափու կարողութեան բարձր Հայոց Կարնոյ քաղաքի շուրջանակներն շրջափելով դրչի առի և հին երկաթագիր մա-

անենից յիշատակարաններէն ալ բաւական քաղուածոյք ընելով Ձեր պատուական Մամլոյ տպագրութեան ընծայելի ո՛չ թէ ազգին ինձ վերայ համարումը աւելցնելու միջոց մը փնտռելն էր այս իմ նպատակս, այլ կղերակից եղբարց՝ և ազգիս ուսումնասէր երիտասարդաց սիրոն և ազին ևս քան զևս ազգիս հնութիւնքով եռանդով բորբոքելն էր, որոնք անտարակոյս կը ներկայացնեն մեր մտաց և երևակայութեան առջին, նախնի քաջարանց հսկայագործութիւնները կրօնասիրութիւններ և նոցա առաքինի և բարենպաստ գործոց ընթացքը, և մեր յօժարանաց նկրտումներ կը ձգեն դէպ ի այն անխոտոր շաւիղն, որ իրենք գնացին և մեզ ուսուցին երթալու։

Ասոր և այսպէս եթէ այս աշխատանաց երկը Ձեր վեհանձնական ոգւով մամուլն անցընելու հոգը չխնայեցիք ես ալ Ձեր և ազգին երախտեաց փոխանակ ուրիշ կարևոր ձեռնարկութեան մինչամուխ ըլլալու ճիգս չը խնայելով շնորհապարտ կը կացուցանեմ անձս Ձեր ազնիւ մեծութիւն մնալ միշտ

1870 Օգոստոս 17

Ի Կ. Պոլիս

աղօթարար թշուառ
և պանդուխտ Տ. Յովհաննէս
քահանայ մահտեսի Մկրտչեան
Վաղարշակերտցոյ

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲԱՐՁՐ ՀԱՅՈՑ

Ի Տ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՓԱՀԱՆԱՅԷ

ՎԱՂԱՐԹԱԿԵՐՏՈՅՆ

Տեսէ պօյին որ 'ի Հայ բարբառ Հղուապարան ասի, է կերճ լերանց առ թիկամբ Կարնոյ Քաղաքին յարևելից կուսէ, այս ճանապարհ խորտուբորտ 'ի բաղում եղեալս Դարբասանդից զառ ի վեր բարձրացեալ ընդ յԱրևմուտս կոյս, ուստանէ Դաշտակ մի յորդաւոյր շրջապատեալ շղթայաշար լերամբ յԱշխարհին բարձր Հայոց, յորոց սողոսկին ջուրք բարեհամ զով և ցուրտ՝ քամեալ 'ի խիզեղկից պարառեալ լերանց՝ և խոխոմաձիգ ընթացիւք գնան 'ի դաշտ անդր բարերարել զանդս՝ և զարտօրայս բնակչաց Կարնոյ Քաղաքի. Վերք և շրջապատ դաշտավայրիս զոգ ցեռ հատանել աչաց յիտուն մղոնաւ տեսանիւր. յԸստորուտ այսր ըղտապարան կրճին 'ի շրթունս եղեալաց դաշտավայրին, յարևելեան կուսէ է քաղաքս Կարնոյ վայելչադէր և լայնանիստ

զոր ըստ պատմչաց կառուցեալ է Թէոդոս կայսր յունաց 'ի ձեռն Սնաւօլայ զօրավարին իւրում, յիւր անուն Թէոդուպոլ անուանեալ ընա, զսմանէ աւանդութիւն է նաև թէ կին Թէոդոսի Սնաւօլ Սնուն լինել 'ի բազմամարդ Սրծն քաղաքէ մարդայ Կարնոյ, իբր յանուն նորին եւս կառուցանել զայս Քաղաք յաւուրս Ներսէսի մեծի Հայրապետին մերոյ։

Սյս քաղաք մարդաշատ կիսաբոլորակ ինն ձեռով զարդարեալ հին՝ և վազեմի բրգամբ և շինուածովք՝ և խիտ առ խիտ մկնիթովք մահմէտականաց որոց թիւն ժամանէ ցհարիւր. տունք Հայոց իսմա հաշուին հազար, մահմէտականաց չորս հազար, յունաց ութսուն, և հայ հռոմէականաց հարիւր։

Ինքր շինուածս այսր Քաղաքի է՝ յոյժ երևելի Եկեղեցին Հայոց զոր կառուցեալ են 'ի 1837 ամի և Դպրոցն վայելչադիր զոր վերսին նորոգեալ է հաճի Յակոբ էֆէնտի Մակարեան ոմն յիշխանաւորաց Քաղաքին։

Խափիւռս քաղաքին Կարնոյ տարածեալ գիւղօրէից՝ գիւղաքաղաքաց՝ և քաղաքաց բնակիչք առ հասարակ ի ութսան միշտ գալ յայս Քաղաք յառնել տուր և առիկս վաճառաց. որպէս բնակիչքն, Բաղիշոյ, Տարօնոյ, Վասպուրականի, Գողթնոյ, Բաղրևանդայ կամ Ծաղ-

կոտան գաւառի ։

Այս երկիր բերրի օդն առողջարար չուրն բարեհամ գով և ցուրտ. յարևելից ունի զԲասեն յարևմտից զաշխարհն Դերջանայ և զՊոնտոսի 'ի հիւսիսոյ Զօլթի զՆարման և զայլ կալուածս Լեռն անուն ուրուն իշխանի վրայ որոյ յանուն և աշխարհն ցարդեւս կոչի Լեռնեանց կամ լիւանայ, իսկ 'ի հարաւոյ Կոկիան Հայոց տեղի աքսորանաց Ոսկեբերան Հայրապետին Յոհաննու ։

Դարուն առատաբեր բերէ զնմանութիւն եդեմի. քանզի յամենայն կողմանց ականակիտ աղբերք չուրց ման 'իման առեալ արծաթափայլ ընթցիւք ճօճան զնալ ընդ խրամահատս թմբոք խիտ առ խիտ մշակեալ արտերէից ադարակաց և պարտիզաց. իսկ բազմաբուրեան ծաղկունք որ երին երին զարդարեալ և 'ի ծաղկածիծաղ ծղօտս ծածանեալ ման վայելչացուցանել ընդ բոլանդակ երեսս անմշակ վայրաց և հովտաց. իբրու այն թէ բնութիւնն ճարտարարուեստ գորգ և թաւիշեն փափուկ տարածեալ է ընդ ոտիւք տեսողաց այլ զի՞նչ ասացից զնաշխարհիկ լեռն յօրինի վայրն բոլանդակ իբր անձեռագործ տառաղան ծաղկանց. դաշտք և լերինք գաւառիս լի են վայրենի փողփողաւետուր թռչնովք. և յաւէտ այնք են ըր՝ բրամարգի. կաքհաւ. կռունկ. և զանազան տե-

սակք ծիծռանց . ճայք . ճարեկք սա վայրենի. բաղք և այլ բազմատեսակ սեռք խայտուտիկ թռչնոց , որք ճախր առեալ երամովին 'ի վերին դաւառս օդոյ . քաղցրաւաչ դեղդեղանօք երգեն զերդս բնութեան օրհնելով զարարիչն ամենօրհնեալ . այսդաշտ կիսաբոլորակ իմն ձեւով նշմարեալ տեսողաց. ծածանի միշտ լիալիր արմտեօք և արդիւնաբեր բուսով . զորս անխընայ սիրէ բնութիւն . զորոց սատեն մի քսան միոջէ ճառագրելն դէպ վարկայ . այլ մեք դարձցուք 'ի կարգ բանիս . այս հարթավայր դաշտակ բարձր Հայոց բազմամարդ թէ 'ի լեռնավայրս և թէ 'ի դաշտավայրս են անհամար դիւղք և աւանք Հայոց և Տաճկաց բնակիչք սոցա . ի հեռադայ յարուեստս բազմօք զարդարեալն յորս և ըստ տեղոյն են յառաջադէմ. են որ 'ի մշակութիւն անդաստանաց հողագործք և են՝ որ 'ի չորեքոտանութեան 'ի հիւսնութեան 'ի դարբնութեան յորմնադործութեան յոտայնանկութեան 'ի քարահատութեան և յայլ արուեստս կարի նուազունք են վարք և բարք սոր բնակչաց դիւղօրէից մանաւանդ Սղդայնոցս մեր են համեստք . բարեբարոյք . դթածք հիւրընկալուք և որ ինչ վայելէ 'ի պարտս մարդկութեան , 'ի կրօնս հաստատք , 'ի վարս խոհեմ , 'ի պայծառութիւն Եկեղեցւոյ փութաչան ըստ չափու կարողութեան , 'ի կեցութիւնս քաղա-

քալար և մաքուր, 'ի կերակուրս և յընդերձիս
հաւատոյ'ի տուր և առիկս յաջողակ. վասն մերոյ
լինելոյ նոցա 'ի կեդրոնատեղին Կարնոյ, 'ի հիւ-
սիսոյ արևելեան այսր դաշտավայրի է դեռ ինչ
որհատանէ զմի մասն դաշտակիս. և ընթանոյ
յարևելս կոյս խառիլ 'ի ճորոխ մեծ գետ.
կազմելով զաւինաձիրս իւր ճախճախուտս ճահի-
ճքս շամբից եղեգանց. յորմէ բարերարին
պաճարեղէնք շրջակայ գիւղօրէից Հայոց և
Տաճկաց. 'ի դաշտավայրիս ուրեք ուրեք արա-
տաբղխին ակունք հանդային ջերմաջերմից և
ցրտադին ջուրց 'ի տոցունց են որք 'ի նախնումն
ջերմաջերմն. բղխէին այլ այժմ 'ի պակասելոյ
հանդային իւղոց և հիւթոց և 'ի շինանելոյ հրա-
բուխից. ցրտացեալ են ակունք այսր հանդա-
յին ջուրց՝ որ ցարդ պահեն յինքեանս զրա-
կուութիւն զհամ զհոտ հանդային ժանտամուտ
ածխաց և փայլուց։

ԿԱՆ ԳԻՒՂ.

Ի հիւսիսոյ Սրևմտեան Քաղաքին Կարնոյ
է այս գիւղ մեծ. քան զամենայն գիւղօրէս 'ի
դաշտավայրին Կարնոյ, հեռի կիսով ժամու
'ի քաղաքէն. յորում են տունք Հայոց 270 և
Տաճկաց 70. հայկազուն բնակիչք այսր գեղի
վաղու իսն աւանդութեամբ ասեն լինել գաղ-
թականք 'ի քաղաքամօրս մեր յԱնւոյ մեծի, պա-
տրաստին առքս յերկրագործութիւն, յանա-

քաղաքաշինութիւն, 'ի դարբնութիւն, 'ի հիւսնութիւն, 'ի դերձակութիւն. է առ Եկեղեցի մի չափաւոր 'ի տեսս վայելչութեան կառուցեալ 'ի մերազնեայ բնակչաց տեղւոյն 1833 ամի Եկեղեցիս այս ունի յինքն քահանայս հինգ հովուել զժողովուրդ. ունին և մի դպրոց ըստ տեղւոյն վայելուչ յորում ուսանին մանկտիս հարիւր երեսուն՝ և աղջկունս երեսուն և հինգ. յումեմն և 'ի նախատինս պանծացեալ Կարնեցւոց որք ցարդ չունին Դպրոց ինչ իրական սեռի։ Յայսմ գեղջս է ծնեալ Տ. Հմայեակ Քահանայն որ այժմ բնակի 'ի Կարին. Քահանայս է համեստ խոհեմաբարոյ՝ ուսումնական որ և այժմ կայ և վարէ զառաքելութիւն կրօնական ժողովոյն Հայոց Կարնոյ քաղաքի հանդերձ երաժշտական դասատուութեամբ մանկանց վարժարանիս։

ՇԽՆՈՅ ԳԻՒՂ.

Գիւղս այս անկանի յարևելից հիւսիսոյ Քաղաքին Կարնոյ. հեռի միոյ քառորդաւ 'ի Կան գեղջէ, տունք Հայոց իսմա 40 և Տաճկաց 10. մերազնեայք շինեալ են ատաւնօր Եկեղեցի մի վայտակերտ տակայն ձևաւոր և վայելուչ, 'ի ներքս 'ի Տաճարն զարդարեալ է պարզ և անպաճուճ զարդուք, ժողովուրդք

այսր դեղջ են բարեբարոյք՝ մարդասէրք՝ և յօժարք միանդամայն ըսել բանի քարոզութեան Աստուածային Սուրբերանին. ունին և 2 Քահանայս հովանել զնոսա. անուն մի-ումն Տ. Վրդանէս և երկրորդին Տ. Կիւրեղ գուսք յայսմ դեղջ Սուրբերան մի հնագոյն և Մաղաղաթեայ չափուով մեծութեան արդի Ճաշոցաց. գրեալ յաւուրս Պետրոսի դիտա-դարձ Հայրապետին մերոյ, զհետագայս 'ի յի-շատակարէ այսմ Սուրբերանի դէպ համարիմ 'ի մէջ բերել 'ի ճաշակ հնախրաց "գրեցաւ Սուրբերանս 'ի թուականութեան Հայոց Ն.Ջ.Է. (487) խնամ ձեռամբ Եւագրի անուղ-ղայ և անարժան կրօնաւորի, 'ի Հայրապե-տութեան Տ. Պետրոսի որ զկնի կենդանու-թեան նորա նստաւ այլ Հայրապետ որ կոչի անուն նորա Դէոսկորոս. և 'ի թագաւորութեան Յունաց Մէխայէլի բարեպաշտի. արդ աղերս արկանեմ առաջի ձեր յիշել զիս առաջի Քրիստոսի և խնդրել զողորմութիւն ամենայն ազգատոհմի խնոյ և Սատուած զձեզ յիշեսցէ յիւրում գալստեան" այս Սուրբերան հին երկաթագիր թէպէտ զտէրութենէ Հայոց և զաեղբոյն յորում գրեալ էր յիշատակութիւն ինչ ոչ գոյր, այլ թուի թէ յաւուրս Պետրոսի դիտագարձի 'ի բաժնի Յունացէ գրեալ, 'ի կողմանս Սեբաստիոյ կամ այլ ուրեք, որ գովէ

գբարեպաշտութիւն Միխայելի 'ի բաց ձգելով զանցս և զդէպս Հայաստանի։

ԱԳԱՐԱԿ ԳԻՒՂ

Զիգալիկ այն է ազարակ գիւղ Հայոց հեռի 'ի քաղաքէն Կարնոյ, յորում են տունք Հայոց 80 և տաճկաց 30. ունին Հայք յայսմ գեղջ մի Եկեղեցի և Վարժարան վայելուչ և զերիս Քահանայս հովել զնոսա. գիրք վարժարանին և շինութիւնք ըստ տեղւոյն մեծաշէն և ընտիր. բայց վասն անմիաբանութեան Սղդայեցոց մեր այժմ փակեալ դտանի. և մանկունք գեղջիկք յաճին դատարկապորք զօրն ողջոյն ընդ փողոց. Սակայն յամենայն դիւղօրէս յորս դէպ եղև մեզ շրջիլ դոքցես այսպէս տեսաք. զմանկունս Հայկազնեայս Տէր հանցէ զիշխանս Սղդատէրս և դէտարթունս՝ խնամ տանել 'ի դատարակութիւն մանկանց Հայկազանց յուսումն դպրութեան։ Յայսմ գեղջ ծնեալ է Գ. Մկրտիչ Խաչիկեան ուսումնասէր պատանին յամի 1847 յունուար 1. որ 'ի մանուկ մատաղ անտի տեղոյս վաւելալ 'ի սէր Հայրենեաց և 'ի կրօնս Սրբազանս։

ԻՆՃԷ կամ ՋԵՐՄՈՒԿ

Ելեալ յազարակ գեղջէ դէպ յարևմուտս կոյս իբր երկու ժամու հեռաւորութեամբ ճանապարհի ժամանեցաք 'ի գիւղն Ջերմուկ որ ըստ բաւական վայելչադիր է, ունի յինք Հրապարակ

և պանդոկս ոչ սակաւս 'ի հիւրընկալութիւն անց-
ցորդաց ճանապարհին Կ. Պօլսոյ. յայսմիկ գեղջ
բղխին կրկին հանդէպին ակունք ջերմաջերմից.
յորոց մինն յատկացեալ է 'ի լուացութիւն ա-
րանց և միւսն կանանց, այս ջուր հանդէպին կա-
պուտադոյն և արշալոյսին, յորմէ բուրէ հոտ
իմն դառնախորժ և տոկոլ, և օդուստ ոչ սա-
կաւ ընծայէ ախտացեալ ինչ ինչ ցաւոց մարդ-
կան լուացելոց 'ի սմա. է սոսա Եկեղեցի մի
նորաշէն վայտակերտ. վաղուկ և գեղանար
քանդակագործութեամբ. տունք Հայոց 'ի
սմա 20 և տաճկաց 10. սակայն յոյժ ցաւելոյ-
յոյժամ ատուդեցաք թէ չի՛ք սասանօր Քահա-
նայ հոլել զնոսա։

ԳԱՐԱՐՁ ԳԻՒՂ.

Ընդ յարևելս հիւսիսոյ Իրիճէի է՝ վաղա-
մերձ գիւղս այս ԳԱՐԱՐՁ յոր երևելիօթս ա-
յրարեալ 'ի սան ուրումն Մ. Յարութիւնեան
Սարգսի. և վայելեցաք սասանօր Աստուածա-
սիրական ջերմ մարդասիրութիւն նորա սասէ
Եկեղեցի մի վայտակերտ և յոյժ վայելուչ և
խաչեալ նորա պճնաղարդեալ վաղուկ քան-
դակագործութեամբ ըստ իմ հնախոյզ բաղ-
ձանաց և հարցաքննութեան պատմեցին մեզ
բնակիչք այսր գիւղի զմեծատարած աւերակաց
շինատեղից կրծանելոց երևել ասէին տեղիք
բաղանեաց պանդոկաց և այլոց մեծամեծ շին-

ուածոց յոյժ ընդարձակ տարածութեամբ չբը-
ջակայից այսր գիւղի մինչ բաղմից գտանել
բաղմաց գինու կանայի ապարաչան ապակե-
անօթք զարդք, և մանեակ պարանոցի, կոնք և
թորիչ արոյրեայ դրամք վաղեմի դրոշմեալ
գրով Հելլենական զայս ամենայն բանք պատ-
մութեան ընդ արմացոյց գիս և ցուցու իմն
դիպացան հերք գըլխոյ իմոյ պատասխանեցին
թէ «սա է Արծն Բաղաք բաղմամարդ» առ
ժամն անկաւ 'ի սիրտս բանք պատմութեան
Լատիներատացոյն որ 'ի նկարագրին զխու-
լի ճոխութենէն Արծն Բաղաքի թուէ լինիլ
անդանօր Եկեղեցիս 37 և հաղարս հազարաց
Հայկազուն բնակիչս 'ի նմա յոր խոցեցաւ
սիրտ իմ հայրենասէր և 'ի տխուր լռութիւն
խորհեցայ զհին աւուրց վայելչութենէ նորա
և 'ի հառաչ սրտի աւաղեցի զփարխուլ և զան-
շուք բաղդ պերճապսակ աշխարհին Հայոց.
թէ զի՞արդ կորուսաք այն մեծահատոյց պեր-
ճութիւն, 'ի ձեռն անբարեսէր բարուց հա-
ւուցս մերոց նախնեաց, որք տապարաւ սուրբ-
թեան բացին ինքեանց՝ և որդւոց իւրեանց
ական կորստեան՝ և թիւր ծառայութեան ծաղ-
կեցին զայն մեծածախ շինուածք ամրոցաց.
տանց բուրատանց և հիասքանչ պալատաց
ընդ շամանդաղիւ յաւիտենականութեան,
կորուսին զծաղկածիծաղ վայրս ծնողեան

զոր 'ի դարս դարս ժամանակաց ստացան վաստակահոծ Հարք Հայրենեացս՝ և ահա իբրև տիկին անիւեայ նստիս 'ի խոր լռութեան, եղեալ յաւերակս զիտաս. քոյ մեծաշուք ո՞ւր. քոյ ծոցածին որդիք սիրելիք տարագիր յաշխարհ հեռավայր՝ և ընդ. քարածաղ ոլորտս տիեզերաց զայս ամենայն մտաբերեալ 'ի թեւս թեթեւս մոտացածին հանճարոյ բացան ճահիճ. ք աչաց աղբերցս արտասուաց՝ և յորդահոսան դեռս ուռոդեցին զծնօտիւ. քս. 'ի խորհուրդ տխրադին դառնացեալ խորհրդով մտադիր եղէ ընդ առաւօտն 'ի ծադել վարդամատին արեւու երանելի և շրջել յաւերակունս զբոլորիւ. ք դիւղիս, և ահա մտադիր եղէ 'ի տես անդր մրցանաց տեղի անկելոց նահատակաց որք 'ի նախնեաց մեր շիրմաց դոց ցեռ դոս նշխարհ ոսկերաց նոցա 'ի լռին լիմն խօսէին 'ի սրտիս ըղձալիտիակ շրթամբք մատչիլ 'ի համբոյր որդիապարտ սիրոյ խնկելի աճիւնից, և ահա այսպէս՝ և աւելի. քան զայս մորմնքս աղեաց ստացեալ դարձայ 'ի կայանս իմ հարցի զթիւ համարդի ընակչաց այսր դիւղի գտի տունս 60 և Սահմեռականաց 20 և 2. քահանայս հովուել զնոսա Տ. Յարութիւն և Տ. Սարգիս անուանի։

ԳՈՄՔ ԳԻՒՂ.

Յարևմուտս հիւսիսոյ կէս ժամաւ հեռի 'ի

Ղարարդ դեղջէ է այս գիւղս Գոմք կո-
չեցեալ որ թարգմանի մակազատեղի խաչանց
ինչևանս կալաք յայսմ դեղջ 'ի տան բարեպաշ-
տի ուրումն որ ոչ տակաւ մարդատիրութեամբ
ընկալաւ զմեզ, բնակիչք այսր գեղջ են տա-
կաւաթիւ ունին և վաղեմի Եկեղեցի մի, տրա-
են յոյժ բարեպաշտք, կանխեն հանապազ
յԵկեղեցին իւրեանց, կենցաղավարութիւն
մերազնէից յայսմ գեղջ թէպէտ անձուկ, բայց
ինքեանք չերմեռանդ և ծարաւի են բանի քա-
րոզութեան Աւետարանին :

ԹԱՐԳՈՒՆԻ կամ ԱՐԳՈՒՆԻ ԳԵՂ.

Այս գիւղ կիսալ ժամաւ հեռի ի Գոմքայ
ընդ արևելս հիւսիսոյ, երևի լինել տրա
երբեմն կալուած Արքունի մինչ Արծն բաղմա-
մարդ. Բաղաք կեցեալ կայր կանգուն, տունք
Հայոց ի սմա 20 և Մահմետականաց 2. Եկեղե-
ցին փայտակերտ և Քահանայ մի հովուել զնոսա-
թէպէտ Հայ բնակիչք այսր գիւղի միահամուռ
չերմ 'ի կրօնս Աստուածպաշտութեան,
այլ աւա՛ղ չի՛ք նոցա հովիւ յաչողակ ուսուցա-
նել զնոսա ըստ կարգի Հայաստանեայցս Ս. Ե-
կեղեցոյ, քանզի Քահանայ մի 'ի գեղջս այս-
միկ գոն ըստ ամենայնի ոգէտ և առնաց-
եալ 'ի սիրոյ Աստուածութեան. ընդ այս յոյժ
ցաւեցայ և աւաղեցի զանշուք բաղդ տանս
Թորգումայ, որ փոխանակ քաջաքարոզ հովուաց

նախնի հարց Եկեղեցեաց մերոց այժմ վիճակ-
եալէ այսպիսի ոգէտ հոլուաց ։

ՆՈՐՇԷՆ ԳԻՒՂ

Ի Թարքունի գեղջէ ընդ արևմուտս հիւ-
սիսոյ անկանի գիւղս այս Հայոց . յորում են
տունք Հայոց 10 և Տաճկաց 20 , ունին ինք-
եանց Եկեղեցի մի փայտակերտ և Նորաշէն
ղրմէ ասի կառուցեալ քանի ամօք յառաջ
յԱնոն անուն ուսմնիկ Ռուսացոյ 'ի յիշա-
տակ Հոգւոյ Ծնողաց իւրոց , որոյ վասն մաղ-
թեցի առ Տէր զի տացէ վարձս բարեաց, և յայսմ
գեղջ է Քահանայ ոք Տ. Յարութիւն անուամբ
հոլուել զժողովուրդն ։

ՍԱԼԱԶՈՐ ԳԻՒՂ

Յարևմուտս Նորշէնայ է այս գիւղ տունք
'ի սմա Հայոց 8 և տաճկաց 30 . քնակիչք այր
գեղջ թէպէտ ամենայնիւ չքաւորք , այլ հիւ-
բընկալուք ամօթխածք ջերմեռանդք և առա-
տաձեռն ունին և զԵկեղեցի իմն կառուցեալ
յանուն Սրբոյն Սարգսի . և Քահանայ ոք Տ.
Գրիգոր անուն հոլուել զնոսա, սոյն գիւղ ասեն
լինիլ 'ի նախնումն բազմամարդ զորմէ վկայեն
գերբուկք աւերակաց , յարևմուտս կոյս առ
թիկամբք գիւղիս 3 կամ 4 փարսախաւ հեռի
'ի շարս շղթայակապ լերանց երևիւր տիզացեալ
լեառն իմն ձոյլ միասանի , կարծեաս թէ բնու-
թիւնն 'ի տարապարտաս չէր զաւուցեալ զայս

ՅՈՅՈ

247-2916

լեռան միահոյլ, որոյ գագաթին ամենեւին և
շրթունք նորա իբրեւ զշուրթն բաժանի,
յորոյ վերայ հաստատեցայ յիմ կարծիս լինել 'ի
ոմն տեղի հրաբուխից 'ի վաղ անդր ժամանակս,
այլ ընդ անցանել բազմահարուստ դարուց և
ժամանակաց զակատեալ են խոզք և հիւթք
հանդերձին հրաբուխից, յորոց գոտարկեալ
այժմ կայ և մնայ առանխաղալ 'ի պարս լե-
ռանց, որպէս Սնոսոլիէներ կոչեցեալ կիրճ և
բերան ծովուն Պոնտոսի, որ հաղար ամօք
յառաջ քան զ'Քրիստոս յաւուրս Պրայիմոսի
արքային Ֆրոյիոյ ծխախառն բացով մրրկեցու-
ցանէր զիւր գագաթն անմատչելի. և 15 մղոն
ճանապարհաւ հեռի շամանդաղ ճառագայ-
թիցն նշողէր յերեսս կապուտակ ջրոյն, Վաս-
իլորի՝ և Պոնտայ՝ նոյնպէս և սա երբեմն
ամն և աղբիւր հրաբուխից. այժմ սառնապատ՝
և խաղաղ։

ԸՂՏԱՔՈՐ ԳԻՒՂ

Ձեզ ընդ կրունս գարձեալ 'ի Սալնոյ ձորոյ
'ի կողմն հիւսիսոյ Սրևելեան իբր չորից ժա-
մուց հեռաւորութեամբ 'ի մօտալուտ ձմեռան
այն ինչ ծխին կատարք լերանց գառնա-
խիտ և միգապատ մրրկաւ ուղեւորեցաք
գնալ 'ի հանդիպակաց գիւղ Ընտաքոր անուն,
թեւակոխելով զերիսուք՝ գիւղօրէիւք և տեղ
գատեցին զմեօք օդ մառախլապատ և ձիւն

ուղղասարան, ակաս հոսել 'ի վերուստ և ձայնք արձանագանաց հիւսիսային դառնալիժամ հարցնց, մէս առ մէս ալեաց ընդ օդս հնչէին, առեալ շունն 'ի բերան առ 'ի գբաանել սակաս ինչ պարէն անխնամ դերդասանիս իսոյ. հաղիւ հաղ հասաք 'ի սահմանս Ղարաձորոյ, ժամանեցաք 'ի գիւղն բարեշէն և երեկոյթս արարեալ 'ի տան ուրուսն Տ. Գօրգս Քահանայի, այս գիւղ գեղեցկագիր և պատուական չինեալ կայ 'ի ծոց ողախեալ լերանց որ 'ի թիկանց կուսէ. 'ի սմա են տունք Հայոց 20 և Տաճկաց 45 ունին գեկեղեցի մի գեղեցկաշէն և 2 քահանայս հովուել զնոսա Տ. Գօրգս և Տ. Յակոբ անուամբ։

Իսկ 'ի գիւղէն լերանց գիւղս սողոսկին ջուրք զոլ ցուրտ և բարեհամ աղբերց 'ի վերուստ անտի ապրանդից և խոխոմից լերանց. քամեալք կաղմեն գետ ինչ բաւական մեծութեամբ և կարկաչաստահ գնացիւք հոսի ընդ զառիվայր 'ի դաշտ անդր զաիուն եղերաց ուռենեօք և բարտեօք պատուապարդեալ ունելոյ, շրջէ զերկուս ջրաղացս, և սրանայ խառնել 'ի մօրին մարդաց Կարնոյ. իսկ 'ի կողմն արևմտեան է գերեզմանատուն վաղեմի Հայոց յորում է Եկեղեցի փոքրագիր, զայսմ գերեզմանատանէ առեն Քահանայք թէ յաւուրս Հերակլի կայսեր Յունաց 'ի գերեզարձ

առնել նորա դիտաչափության դալ և անցանել յայսմ դերեզմանատանէ պատանի մի նորա-վախճան յառնէ դադարէն . վասն այնորիկ զանուն տեղւոյն յօրէ անտի և այսր կոչի Ս. Յա-ռութիւն , որ է այժմ ուխտատեղի հաւատա-տացելոց բազմաց . յետ տեսանելոյ մեր զբա-զում մարդասիրութիւն 'ի բնակչաց դեղջա-տուեալ մեր զհամբոյր հրաժեշտի առ համօրէն Հայկազունս յուղի անկաք գնալ յԵրկնիսա գիւղ :

ԵՐԿՆՅՆԻՍ ԳԻՒՂ.

Յարևելից հիւսիսոյ Կարնոյ է գիւղս այս ունելով յինքեան զբնակութիւնս Հայոց և Ֆաճ-կաց , որոց առաջնոցն թիւ հասանէ ցհինգ-իսկ երկրորդին 20 , ունին ատանօր Եկե-ղեցի իմն կառուեալ յանուն Ս. Աստուածած-նի , խաչկալ Եկեղեցւոյս պճնազարդ՝ գոյնդոյն երանգօք ներկեալ , յաջմէ և յահեկէ սեղա-նոյն քերթք թռուցիկ՝ շինեալ 'ի տախտակս մա-ծուցիկս , տեսի յորմունս այսր Եկեղեցւոյ քա-րինս ինչ քանդակեալ տիրկչական նշանօք , ո-րոց յատորոտ միումն գոյր այս արձանագրու-թիւն ,, կանգնեցաւ Ս. Խաչս բարեխօս 'ի տիրկու-թիւն հոգւոյ Տ. Աբրահամին 'ի թուին Հայոց Ն. Ծ. Ը այն է 459 ,, դուռ յայսմ Եկեղեցւոջ և այսմաւուր մի ձեռագիր յօրինեալ 'ի լաւ և գեղեցիր յօրինակէ Ծերունց կոչեցեալ յԱրծկէ

Բաղաքի 'ի ձեռն Յակոբ և Մովսէս դրչի 'ի խնդրոյ Տ. Մկրտիչ կուսակրօն Քահանայի 'ի յիշատակ Գլակայ Ս. վանուցն 'ի Տարօն յիշատակարանին յետ վերագրելոյդ գրէ այս. պէս ,, 'ի թուին Հայոց Զ. Ճ. Ի այնէ 920. 'ի սոյն այս ամի զօրաւոր Սուլթանին Մուրայ Պալ անուն եկն 'ի վերայ Բաղաքին Ուրհայոյ և աւերեալ զերկիրն նստելով 'ի վերայ Բաղա. քաքերդին քանդեալ աւերեաց և 'ի սուր սու. սերի մնաց , և Եաղուպշահ որդի Թահին Հասանայ որ նստէր 'ի շահատանն թաւրէզ յետ մահու հօրն իւրոյ Հասանայ գահակալեալ զաթաբեկ նորա բային զառն պատերազմի և Զօչ պայինտուռ զօրավարաւ յոթեցին պարսիկք զօրաւարին Մուրայ ձերբակալ առնելով զնա ի հատ զդլուխն. և ուղարկեաց Սրմաղան Սուլթանին Հռոմոյ և այս եղև 'ի զօրութենէ ամենակարողին Աստուծոյ և բարեխօսու. թեամբ Յովհաննու Կարապետին ,, յայլուամ պարբերութեան դարձեալ գրէ ,, 'ի սոյն այս ամի Հայրապետ Ս. Ռէխտիս Գլակայ Տ. Մկրտիչ հաղորդ համախոհ եղբարքք ձեռնարկեցին 'ի շինել զդմբէթ Ս. Կարապետին՝ Ս. Սուրբանոսին՝ և զյարութեան տաճարին օժանդակութեամբ երկանիկ դիտապետիս շինող Սուրբան Եպիսկոպոս մականուանեալ ,, դարձեալ ասէ ,, 912 թուականաւն կատարեցաւ 'ի Բաղէշ

Քաղաքի Յովհաննէս Եպիսկոպոսն որ յերկրէն Աշոյ 'ի Հողաբերդ դեղջ վարժեալ և սնեալ 'ի վանս Գլակայ ընտիր և առաքինաբարդ վարուք ,, յետ պատմելոյ զքաղաքն և արժանայիշատակ վարս երանելոյն յարէ ,, ասելն առ ձեռնարկնորոգել զտաճար Սրբոյ Կարապետին և յօրինեալ զնա դեղեցիկ շինուածովք ընդ-նմին և զվկայարանն Սրբոյն Ստեփաննոսի և զկամթուղիկէն մեծ , յորմէ առիթ դուռալ Դմի կոչեցեալ շրջակայ Սարաց եղին բարուրան 'ի վերայ անմերձին թէ քակելով զմզկիթն ոտայ շինել Եկեղեցի , և 'ի ձեռն ուսմանն դաստուերի Աշոյ Խալիլ անուն կոչեցեալ ձեռաց և ոտից կապանօք առաքեն առ Էշրաքի ամիրայպետ Բաղիշոյ , որ յետ բազում դառնալոյ ի նմանէ չարչարանաց և անպատմելի տանջանաց փոխի վկայական մահուամբ 'ի Թրխատա և թաղի պատուալ առաջի Սրբոյ Սեղանոյն Ս. Սարգսի աւագ Եկեղեցւոյն Բաղիշոյ 'ի 12 ամրիլի ,, և 925 թուականաւոր պատմէ և զայլ ինն կատարումն 25 ամեայ խիզանցի պատանոյ վրայ թէ զի՛արդ անուանելի և դառն կատաղօք մահու սատակեալ է զվկայական կատարումն մահուան իւրոյ , 'ի սմին ամի կատարի Սարդիս անուն ոմն աբեղայ տակաւի մահուամբ , դարձեալ 'ի նմին տարւոջ կատարեալ է և Յովհաննէս անուն վարդապետ ոմն , որոյ մահու

դաւն և սոսկալի յիշատակութիւնն ընդարձակացոյց ինչ . դարձեալ 'ի 1113 թուականուոջ յայլ ինն տեղւոջ պատմէ ,, Սրբազան Յակոբ Կաթողիկոս եկեալ Սրբոյն Գրիգորի տարար զանարժան Տ. Գէորգեան Տ. Յակոբն աւագ Քահանայ և ինքն գնաց յԵրուսաղէմ ,, այս դալուստ Յակոբ Կաթուղիկոսին 'ի Կարին երևի թէ 'ինաւել Եղիազարու յաթոռ Կաթողիկոսութեան , հակառակ Կաթուղիկոս Յակոբայ մեկնի Յակոբ 'ինամանէ գնայ 'ի Պոլիս և անտի յԵրուսաղէմ և հաստատէ անդէն զաթոռ Կաթուղիկոսութեան . և 'ի 1180 թուին ասէ շահաբան Պարսից սուլթան և սեպուհնոր զորոք էառ զԴարվէժ յՕսմանցւոց և 'ի սուրսաներն մաշեաց զոր Օսմանեան , հեռևեալ յաւին զՏէմիրզափուն և զմիւսումն զԵրևան ընդ որս էառ նաև զԴենէ՝ զՄակու՝ զԽոյ՝ զՄարմաստ՝ յորս զորձեաց բաղում նախճիրս արեան . զերևաց և 'ի ցանկալի Հայաստանեաց բաղում արս ազնուական կուռեաց ապ. ինքն զաւ և զապուռ ցաւալի հայրենեաց սիրոյ և հայճեպս կատարեալ զայս ամենայն ցաւ թոյց վախճիլ յերևաց զոր Օսմանեանց ։

Իսկ Զքալ օղլի զաւէ Սինան փաշա որ զՀեռ մեռեալ զոր ապարսից յոչ ժամանելն մեծոյ 'ի Նախչևան քաղաք , Հմեռել անդէն յայսմ յամի այնպէս ասասկացաւ սոքն 'ի Նախչևան ։

մինչ մեկ եէմ դարին չորս ոսկւոյ հարիւ առ-
նել կարէինք բաղումք 'ի սովոյ և 'ի առ-
նամանեաց սատակեցան . և Զղալ օղլի զատէ.
Սինան փաշան յետս դարձաւ յարշաւանացն
իսկ յետ յերկրորդ և յերրորդ ամի դարձեալ
զօրութեամբ Մուրատ փաշայի . դնաց 'ի վերայ
Դաւրէժու , և յո՛չ կարացեալ առնուլն վնաս .
դարձաւ 'ի միջագետս ասելոց , և յետ 3—4
ամի դարձեալ դունդ կազմեաց զօրութեամբ
Սաղր ահմէտ փաշայի և եկն պաշարեաց զե-
րևան Բաղաք և ո՛չ կարաց առնուլ . յորում
կեղրոնացեալ էր Ամիրդունայ խան պարսից
երկոտասան հազար զօրօք ։

ԽԱՉԻ ԳԻՒՂ

ԿԱՐՆՈՑ

Ատի շեղ ընդ հիւսիս արևելեան քա-
ղաքդ ժամաւ հեռի է վանք Խաչի ամրացեալ
'ի գոգ պարարեալ լերանց. կառուցեալ է տա-
ճար վանացս Կամուրջիկէիս , ներփակեալ
'ի կիսակարակն ամրապինդ պարսպաւոյ . ունե-
լով դրանս երկուս մինն մեծ և լայն 'ի կողմա-
նէ արևելից , և միւսն նեղ և անձուկ 'ի հիւ-
սիսոյ . շուրջ զպարսպօքն բոլորեալ են տուն-
և կայանք դիւղականաց . յորոց 25 են տաճ-
կաց , և 7 Հայոց , որք դաղթեալ են ('ի
Համամաշէն դիւղէ . վասն զի Համամ իշխան
Բաղրատունի շինեալ է զայն յոյր անուն

ցարդ և դիւրն անուանի) իսկ 'ի ներքս 'ի պարիսպ վանացն 'ի կողմն հարաւոյ 'ի մի շարս զետեղեալ են 7 սենեկունք և 'ի պառուածս սենեկաց՝ յարևմտեան կուսէ կանգնեալ կայ արձան Խաչի ածեալ յայլ տեղւոջէ. ցաւիմ ընդ այն զի արձանագրութիւնք Խաչիս աւերեալ էին հաւանեցուցանն։

Եօթն և տասն սանդխաք 'ի վեր բարձրացեալ 'ի տաճարվանացս, մտանէ 'ի դուռ անդր տաճարին՝ իսկ 'ի հարաւային կուսէ, առ որմնէքս տաճարին կայ զ'ամբան Մարտիրոս անուն եպիսկոպոսի ուրուն Նուիրակի Սրբոյ Երուսաղեմի Ս.զրիանուպոլսեցւոյ, արձանագիր զամբանաքարիս զրեալ էր յոճ տառանուր և երկաստիճան կոմարիւ կանգեալ Խաչ 'ի վերայ հանդուցելոյն։

Ինեղ զրանէ զոր առացաք մեռալ նախ 'ի զաւիթ տաճարին, ապա չորիւք տարիճանօք ընդ այլ դուռն ինչ մտանի 'ի տաճար անդր վանացս. որոյ վաղեմաշէն նախ հնութիւնն ակն յանդիման տեսանի. առ գոր Ս.-Սեռարան մի ձեռագիր զրեալ 1822 թուականիս Հայոց. 'ի յիշատակարանի այսր Ս.Սեռարանի էր զրեալ այսպէս ,, զրեցաւ Ս.Սեռարանս ձեռամբ տուս անուն Բարսղի զպրի 822 թուականիս Հայոց և 'ի թագաւորութեան Հայոց Կոստանդնոյ և 'ի Հայրապետաս-

թեան Տ. Տ. . . . 'ի դուռն և 'ի նեղ ժամանակի յաւուրս անբարի., երեսի Կաստանդին լինել իշխանն Յովհաննէս որ ընտրեցաւ թագաւոր Վիլիկիոյ մինչ Հաստատ դիմնարանն ցերկին Ռոբինեանց գալոյ սորա որդի 'ի Զաքէի դատերն Լեւոնի երդուրդի, և յաւուրս այսորիկ տապանակեցաւ Վիլիկիոյ յԵղեսիոյ 'ի Հռոմ և 'ի տեղի մաշեալ ամենայն բնակիչք աւերեցին և ամենայն կողմանք աշխարհին Հայոց դարձան յաւերս ասերակաց 'ի ձեռն Եղիպտացւոց։

ԿՊԻՔՔ ԳԻՒՂ.

Հեռի ժամաւ միսալ 'ի Խաչի վանաց է այս գիւղ, ունի Հայոց իսմա 35, և Տաճկաց 40 մերաղնեաց բնակիչք այսր գեղջ ունին իւրեանց Եկեղեցի մի փառաւոր և Քահանայս երկուս հոգեւոր վնասս. Տ. Բառնաբաս և Տ. Սկրտիչ անուամբ կարի յոյժ հաւանեցայ կղերականացս այսոցիկ մանաւանդ Տ. Բառնաբայ որ բաւականին վարժ է 'ի քարոզութեան և կրօնական յուսմունս անկեղծ՝ հանեան 'ի վարս և 'ի բարս բարեհամբաւոյ, և յԵղբարտութիւն կերպ։ Ի հիւսիսոյ գեղջս կիսոյ ժամու հեռի է քարաբիւրեղ մեծ գրանիտ, քարին անուն տային նոցա բնակիչք տերեւոյն, որ յբարձրանալս կերան մինչ բարձրագոյն կարգեալ երկայնացեալ տարածուն քարանց 'ի տեղիս տեղիս 'ի վերայ տիրացեալ էր, և յան-

բնաւ ապառաժին կոխեալ դուռն կամարաձև
և սեամբ հաստատեալ, 'ի ներքս անդր քան
զդուռն քարայր փոքրիկ 'ի միասանի քարէ
որոյ 'ի ծոցս մինչի խորշս խորշս գործեալ սեն-
եակս կանանց և խահանց. ծխնելքդ սենե-
սենեկացս դէզերցիւռեն յօրինեալ՝ հաստեալ
'ի բնաձայլ ապառաժէ, և երկուս անձուկ պա-
ատուհան արարեալ սենեկացն 'ի հարաւ կոյս,
զհանդամանաց այսմիկ անձաւս չկարացի լի-
նել հաստատ թէ առ յի՞նչ պէտս կազմեալ էր
և յ՞որոց ժամանակաց կայ այս անձաւ. քարա-
կերտս դի առ ցրուեալս դառնաշուշ ձմերայ-
նոյ չկարացի զանձն իրենն արկանել թէ
ուրեւոք յաւուրց անտի հայկազանց մնացեալ
է այս կամ որպէս առանդեն բնակիչք տեղւոյն
'ի Ֆահրատայ ուսեալ մնացեալ ասի ցայսօր
ժամանակ, և թէ ո՞վ էր այն Ֆահրատն։

ԳՎՆԻԿ ԳԻՒՂ

Նուազ քան հեռի 'ի վերոյն է այս գիւղ
յոր բնակին տունք հայոց 20 ենդեշաւի և տաճ-
կաց. մերայնեաց բնակիչք այսր գիւղ ունին
ինքեանց Եկեղեցի վայելուչ և 2 Քահանայ
բայց յանուանութենէ Քահ անայից իւրեանց
ծարաւի են մնացեալքանի. քարոզութեան Ս.
Աստուածանի, օթեւանս կալաք ատանօր 'ի տան
ուրումն Ս՝կրտիչ անուն. քահայի բարեպաշտի,
որ էր յՍ.դդ ականաց վառվառեալ կրակենեարնա-

հատակին Կարնոյ. Հայոց գիւղի բնակիչք այսր գեղջ ունին զվիշտ վանդի 'ի մահմետականաց տեղւոյն. հակառակ արդարութեր կամաց Օգոստոսի կայսերն. ամէն իրի հարբեալ ուշադրութիւն Կարինաբնակ իշխանաց՝ կարդամ 'ի հրաւէր 'ի վերայ սոցին խղճալեաց զի երբեմն երբեմն սիմափեալ հարցեն զսոցանէ և առաքեսցեն քարոզիչս առ սոսա հարցանել զողջունէ կրօնական կենաց Հայաստանեայցս Ս. Եկեղեցւոյ։

ԳԱՏԻԵԷՆ ԳԻՒՂ.

Է սա գիւղ Հայոց, և Տաճկաց խառն. որք միրամ կենակցին ընդ իրեարս. ունին մերաղնեայք 'ի սմա Եկեղեցի մի վայելուչ. և Քահանայ ոք հովուել զնոսա. սակայն բնակիչ այսր գեղջ յոյժ ցրուցեալ 'ի ժամերդութենէ, և այս թաւի լեալ 'ի ապխտութենէ Քահանայէ։

ԳԵՂԱԽՈՌ ԳԻՒՂ.

Հեռի երիւք ժամաւ 'ի Քաղաքէն Կարնոյ է այս գիւղ. յորում տունք Հայոց 15 և Տաճկաց 30. կանք Հայոց այսր գեղջէ՝ նման կենաց բնակչաց մերաղնէից Դիզիկ գեղջ յերեսաց բռնութեան Մահմէտականաց։ Գոյ սատանօր Եկեղեցի մի Հայոց Սաղաշէն կրամած ոսմամբ նման Տաճարին Խաչի վանաց. զսմանէ ասէին բնակիչք թէ ընդ նմա շինեալ էր։

ՈՒՄՈՒՏՈՒՄ ԳԻՒՂ.

Ս. ստրատոս հիւսիսակողմեան լերանց Կարնոյ. այս գիւղ յիւր արևմտեան կողմանէ հաճոյ երևեցաւ. ինձ, թէ յերկանակս աշնան և թէ յաւուրս դարնան պատճառելէնք այսր գեղջ 10կամ 20 աւուրք. յաւալ կանխեն յարօտ ճարակաց, Հայք և Տաճիկք այսմ գեղջ որոշեալ թաղիւ բացակայ են 'ի միմեանց յոր յոյժ հաւանեցայ։ Տունք Հայոց 'ի սմա 50, և տաճկաց 30։ Եկեղեցին Հայոց ատաստանօր յոյժ անշուք դեռնափոր, կառուցեալ յաւուրց անտի բռնակալութեան տաճկաց. բնակիչք այսր գեղջ պատմեցին մեզ լինել 'ի շրջակայ լերինս իւրեանց Կոլծուծ անուն կենդանի ինչ որոյ ձեռին երկայնութիւն աւելի քան զմի կանգուն զոր գալարեալ 'ի սրունս ոչխարաց հասանէ 'ի պտուկս տեսանց, և ծծելով զկաթն թունաւորէ զկենդանին, որոյ վասն հնարս բժշկութեան հայթայթեն յաւէտ, որպէս արիւն առնուլ և չուր ցուրտ մատուցանել են։

ՁԻԹԱՀՈՂ ԳԻՒՂ.

Ընդ արևելս հիւսիսոյ երկուց ժամուց հեռաւորութեամբ Ամատատ գեղջէ է այս գիւղ որ հաստատեալ կայ 'ի սպառուած լեղուակաձև դաշտին Կարնոյ, ոչն այս գիւղ քարեղէն և զուարճալի դրիւք, ճոխ և առատ յամենայն վայելմունս կենցաղավարութեան.

տունք Հայոց 'ի սմա 80, և Տաճկաց 15, Եկեղեցի տրա փառաւոր և վայելուչ քան զամենայն Եկեղեցիս դաշտաբնակ գիւղօրէից Նարեկայ. 'ի ներքս յԵկեղեցին կանգուն կառուցեալ խաչեալ ոսկեզօծ և 'ի շրջանակս պատկերքն Ս. Երրորդութեան յաչմէ և յահեկէ. քերթ թռուցիկ. քանդակեալ, յորոց ոմանց ածեալ պղնձով շերտ մաղտաղութեայ և զարմանալի խորհրդածութեամբ գրեալ 'ի նոսա ,, կարէ՛ք ընդել զրաժանն ,, և միւսն փառ՝ 'ի փարձանն Սատանայ և ոմանց փոր 'ի ձեռին՝ այսր՝ի ամենայն քանդակագործութիւնք են ձեռակերտ Հայոց Կարնոյ, յոյսմ գեղջ են Քահանայք եօթնեք քին որք փարեն զպաշտօնն նուիրական, յորոց Տ. Գիւտիս անն ուսումնական Քահանայ ձրի գաստիարակէ զՀայ մանկունս գեղջն։

Յետ վաղոյ զառաւօտս երթս յոյս գիւղ արդիլեալ 'ի ցրտաշունչ և խառնիւք ձմեռնայնոց հողմոց և ապա գէմ եղաք դնալ 'ի Թուանկ գիւղ, անցեալ ընդ գետ Իրմն կարկաշատահ որ խոնարհեալ ձգիւր 'ի փեղկից լերանց խաչախոյտ, այս գետ երանէ 'ի հիւսիսոյ և մնն առեալ շրջի յարևմուտս խառնիլ 'ի մօրին։

ԹՈՒԱՆԳ ԳԻՒՂ

Ի սմա տունք Հայոց 20, և Տաճկաց 30, և Հռոմկերգաւան Հայոց 7, որք և ամենեքին

սիրով կենակցին ընդ միմեանս, են Իսմա Եկեղեցիս երկուս, մին մերոյնոցդ և միւսն Հռոմէականաց, Եկեղեցին մեր շինեալ կայ Իվերոյ կիսաքրդաւէն ըստակի իրիք, և շուրջ զարմալ մամուտաւոր քարինք դէզադէզ կարկառեալ, յոր ճապաղեցաւ շօշափեսկան հերուկ մտացս. լինել սմա տեղի վաղեմի մեծապարծ շինուածոյ։

ՀԻՆԳԲ ԳԻՒՂ.

Այս գիւղ վայելուչ և գեղեցկագիր, յաւուրս սմաստոյնոյ է զուարճալի զովաբեր հողմովք, և ամերայնի չերմիկս ասէ զբնակիչս իւր, սակս արևմտեայնոցն գոլոյն, Իսմա տունք Հայոց 50, և Հռոմէական Հայոց 20, Տաճկաց 10, ունին Հռոմէադաւանք սուտ Եկեղեցի մի կառուցեալ Ի 1867 թուականաւոյ սակայն չունին Քահանայ, քանզի 1 ամօք յառաջ Յովհաննէս ոմն եղեռնադարձ Քահանայ Ի հոլանդէն գնաս սակս կրօնամարտութեան իւրոյ և Ի եղեգ արկանելոյ զերկուս նորատաշտ ըստ ուրշական ասելոյն, կամանաւորեալ Ի շրխմայս աքսորեալ է Ի Կ. Պոլիս. ընդ մարդաճիւաղ ընկերս իւր։

Ունին և մերոյնոցդ սուտ Եկեղեցի 1 կառուցեալ Ի վերոյ կիսաքրդարակ դարաւանդի որ իբր բուրգ ինչ Ի հեռուստ նշմարի, շուրջ զԵկեղեցեաս դարարառնուն տխուր ենչարանք

գամբանից Հայկազուն ենչեցելոց , յորս էր կոթող Խաչի այլ հին և յոյժ վաղեմի , որոյ շրջաբերին թէպէտ գոյր արձանագրութիւն այլ ան ընթեռնելի : Յարևելեան կուսէ Եկեղեցւոյն Հայոց 'ի փեղկէից երանց քամեալ ձգի առուակ յորդառատ , յորում եռան զեռան բազում խայտախարիւ ձկունք :

Ի կողմն հիւսիսոյ յապառուած դերեզմանատանն Հայոց է հիւղ ճգնութեան երանելւոյն Ներսեսի Հայրապետին մեծի . յայսմ ճրագնարանի ասեն տեսեալ մեծին Ներսեսի յանուրջս յաստուր լերինն զոհրամայր սուրբ Սատուածածինն 'ի հանգերձս ծիրանափառս . որ ասէս յայնմ ատրոսի կանգել ասեն յեռոյ որոյ Հայրապետին զմենատան ինչ յԱնուն տիրամօր . որ ցայսօր ժամանակի կոչի կարմիր վանք : Սյս պատմութիւն քահանայից և բնակչաց մեր ասնէից զեղջս թէպէտ կարի շարժեաց զսիրտ իմ , բայց չ'կարացի հատու լինել խակութեան բանից , թէ յորո՞ւմ ժամանակի էր եղէ դալն ատանօր Հայրապետին մեծի . յա՞ւուրս պատերազմի զօրացն Հայոց ընդ յայնս , թէ յա՞յլուս ժամանակի :

Յարևելեան կուսէ կարմիր վանաց 'ի ընդպատուածս երկուց լերանց 'ի վեր ամբարձեալ կայ բարձրաբերձ ապառաժ մին զոզցեալ անմատչելի 'ի մարդկանէ , 'ի հիւսիսոյ յերեսս այ-

սրբ ապառաժի 'ի միասանի. քարանց փորեալ կան բազմաթիւ աճաւք առընթեր միմեանց որք են տեղի ճգնութեանց սրբոց կուսանացն Հռիփսիմեանց, յաւուրս Տրդատայ արքային մերոյ. ընակիչք այսր գիւղի պատմեցին մեզ թէ "քանի ամօք յառաջ պատանի ոմն քաղաքաւոր ճգանց աշխատանօք մտեալ է 'ի ներքս յայրին, և պատմեալ է թէ "բազում խորշս տեսի 'ի միւսմ սենեկի դրունք խուցանչիւրոց բացեալ 'իմիմեանս, տեղի աղօթից սեղան. և այլն իսկ զառաջեաւ. քարանձաւս է հոլիս անձուկ յորս վանք աւերակ յանուն սուրբոյն Հռիփսիմեայ շրջապատեալ լայնանիստ աւերակօք և վաղեմի դերեզմանատամբք Հայոց. և առաջի աւերակ եկեղեցւոյն բղխի աղբիւր ցուրտ և քաղցրահամ ջրոց, որ է այժմ ուխտատեղի բազում հաւատացելոց. այս վայր փափաքելի այժմ է աւեր և անմարդաբնակ։

ՏԻՆ ԱՐԻԳՈՄ ԳԻՒՂ

Այս ժամու հեռի 'ի հինգք գեղջէ է այս գիւղ, ունք Հայոց իսմա 10 և տաճկաց 40, ամենեքեան ընակիչք սորա են աղքատ և չքաւոր, սակս չունելոյն իւրեանց կալուածս սեպհական։ Եկեղեցին Հայոց 'իսմա յաւուրց անտի բռնակալութիւն տաճկաց չինեալ գեռնապիսի, յայսմ եկեղեցւոջ գտաք այսմանուր ձեռագրագիր գրեալ 1083 թուականիս

Հայոց, որոյ յիշատակարանն էր գրեալ այսպէս գրեցաւ այսմ աւուր "Ի Հայրապետութեան Էջմիածնայ Տ. Փիլիպպոսի Կաթուղիկոսի, և Ի Պատրիարքութեան Կ. Պոլսոյ Տ. Գրիգորի և Ի թագաւորութեան տաճկաց Սուլթան Մուրատայ Ի նեղ և Ի դուռն ժամանակի յորում նեղիմք և հալածիմք, ամենակերպ վշոք, յայսմիկ ամի ասէ" պատահեցաւ ծառայաւիկ Հայոց և Յունաց, որ էր գիր տարւոյն Ե. ազգ Հայոց ապրիլի 13 ին և յունաց 9 ին արարին զատիկ յորմէ հետևեցաւ խռովութիւն մեծ ընդ Յոյնս մանաւանդ Ի Ս. Երուսաղէմ, մինչ գալ Ս.Հմէոն անուն Կուսակալին Դամասկոսի և սիրել զՀայս առնել զատիկ ընդ Յոյնս, խօսի և զմիութեանն ենէ Հայոց ընդ Ս.տրիս ընդ Ղպտիս և ընդ Հապէշս իւրաքանչիւր տօնարաւ բաղդքել յաւեան կուսակալին և Ի դատ մատնել ընդ նոսա, խօսի և զլուսոյ, թէ տեսաք յայսմ ամի և զելումն լուսոյն Ի դերեզմանէն Քրիստոսի. որոյ հանդէսին ներկայէին հաղարաւոր մահմէտականք. յորմէ կալան առեալ դանդատանաց և ետուն զլխատել զՔահանայ ոք Տ. Մինաս անուն Ս.բաբկերչի. և յետ լինելոյ բաղում հրաւէր Ի մարմնոյ նորա Ի ժամ զիշերոյն ետուն թաղել զմարմին զլխատելոյն:

Երևի թէ այս այն Փիլիպպոս Կաթուղիկոսն

է որ բազում շինուածս կանգնեաց Յէջմիածին 1636 ամի և Պարոն տէրն Յերուսաղէմ, յետ որոյ նստաւ յաթոռ Հայրապետութեան Յակոբ Ջուղայեցի 'ի 1669 ամի, և Եղիազար Անթապցի հակառակնմին նստի յաթոռ Հայրապետութեան. Յակոբ Ջուղայեցի գայ ի Կարին, տես յատորապրութիւն երկայնիատ գիւղի և գնաց Յերուսաղէմ հաստատել անդէն զաթոռ Հայրապետութեան մնայ Յէջմիածին Եղիազար Անթապցի վարել զԱթոռիկոսութիւնն յառանձինիւր։

ՍՕՎՈՒՔ ՋԵՐՄՈՒԿ ԳԻՒՂ.

Հիւսիս արևելեան քաղաքիս Կարնոյ կիսով ժամաւ հեռաւորութեամբ է գիւղս այս, Ջրջապատեալ յաւէտ 'ի ճախճախուտ վայրաց և սահմանաց քան զամենայն դաշտաբնակ գիւղօրէս, տունք Հայոց 'ի սմա 12, և Ցաճկաց 35, որք յոյժ սիրով և քաղաքավարութեամբ կենակցին ընդ միմեանս. սակս մերձ գոլոյն Կեդրոնատեղիս Քաղաքին Կարնոյ, ունին մերաղնեայք սատ Եկեղեցի մի նորաշէն և վառաւար և Քահանայ զոմն հովուել զնոսա, յայսմ գեղջ ըղխեն զանազան հանգային ջուրք ցուրտք, դառնախորժք և ածխայինք 'ի գոյն կապոյտ, որպէս երևի զի 'ի դադարել հրաբուխից թէպէտ ցրտացեալ "են "աղբիւրքս, այլ տակաւին պահեն յինքեանս

,, զՀոտ և զգոյն ծծմբային բաղադրութեանց ,
,, 'ի սահմանակից վայրաց տեղւոյն բաղումք
,, կանխեն լուանել յայս աղբիւր Ջուրց , յօ-
,, գուտ մորթական ախտից և կեղեաց 'ի շրջա-
,, բոլորս այսր հանդային Ջրոց չինեալ է կուիա-
,, ծոյ քարամբ աւազան քառակուսի ,, :

ՄՈՒՏՈՒՐԿԱՑ ԳԻՒՂ.

Սակաւ ինչ հեռի 'ի սմանէ ընդ արևելս կոյս է գիւղս այս , առնք Հայոց 'ի սմա 70 , և Տաճկաց 7 , ունին մերազնեայ բնակիչք այսր գեղջ մի փառաւոր Եկեղեցի չինեալ յառաջնուստ կուիածոյ քարամբք . զոր յայսմ Եկեղեցւոջ 4 յայսմաւուր Հեռադիր գրեալ 'ի 900 թուականութեան Հայոց . և 'ի հայրապետութեան Տ. Գրիգոր Կաթողիկոսի և 'ի թագաւորութեան Պարսից Ճիհան շահի , 'ի դառն ժամանակի և յաւուրս չարութեան , յեռ որոյ Ցարէ առելոյ ,, (Ճիհան շահն) զամենայն աշխարհս 'ի հիւքմի կացուցանէր բայց աւաղ որ զամենայն Քրիստոնեայս դառն չարչարէր , և անհանդիստ առնէր հարկապահանջութեամբ կեղեքելով զՔրիստոնեայս ,, ոյն առ երևի լինել այն Ճիհան շահ . որ ասպատակեաց 'ի Զին և էառ զայն քաղաք մեծագանձ (Սրբայանիատն Դէհլի) , որոյ անբաւ հարստութիւնն է դրժուարապատում և կողոպտեաց զՍրբուն Պարլատն հրաշակերտ , և զդիւանատունն ականաւ-

կուռ որոյ ձեռունն էր հրաշակերտեալ Սղամանդ՝ Յակինդ Յասպիս և յայլ զանազան մեծագին քարամբ և միաստանի Սղաւնին՝ Յանկթէ եղակնատիւտ յաշխարհի ։

Իսկ հայրապետաս այս է Գրիգոր 10որդ Սրատազի , յորում ժամանակի 'ի զանազան դէպս երերի Աշխարհս Հայոց , և Կիլիկեայ արշաւի յԵգիպտացւոց և դառնայ Սալանդարան , և դիակամբ հայրերոյ ընանի Աշխարհն Հայաստանի յորում աւուր ազգս փայլատակէ Սուր յաղթանակի Սուլթան Ցէլիմ ին.քնակալի Օսմանեան պետութեան , և Սղոն Յունաց ապատէ վերահաս կորստեան կայսրութեան իւրոյ ։

Եւ յայլում պարբերութեան գրէ « 'ի 879 թուականուն յաւուրս ընդհանուր Կաթողիկոսին Հայոց Պողոսի , սատակեալ 'ի վերոյ մեր մէջ և մառախուղ. և օդ խաւարային պատուեայ զմեօք յամենայն ուստք. վասն մերոց մերոց . զի եկին 'ի վերոյ մեր և երկրին մերոյ , զազանքն արիւնախանձ զոլքն Օթմանայ և հեծեալք Ռօժկանայ , առին զերի զամենայն երկիրս և 'ի սուր սուսրի մաշեցին զոր և զոմն , և հեղեղաձև յորդեցին արիւն բազմայ անմեղայ , և սպանին զմեծ Պարտնապետն իմ Գրիգոր Եպիսկոպոսն, 'ի վանս Յրպնայ ,, յորմէ սատանայ և դոյժ ոտանաւոր բա-

նիւ ցաւակցաբար երդելով այսպէս ։

Բաղմահառաչ ձայն կականի .
Ողաղակեմ արտասուելի ,
Լացէք լալիւն զՍզդս եղկելի .
Որ մերկացաք լոյն յանկարծակի .
Չ՚Հանդուրժեմ այս աղէտի .
Յօրինել կոծ մեծ կակծի .
Տարժել զիմ Սզդն Սրտի .
Յաղէտ վշտայ մեծադնի .
Եկեալ հասին վաղվաղի .
Սզդն մարայ որ Թուրք կոչի Լայլն . . .

Թէպէտ ոճ բանաստեղծութեանս դեղջուկ և ռամիկ այլ յոյժ սրտաշարժ և ցաւալի ։

ՎԱՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

Ի մեծաց արևելից Մուսուրկայ գեղջ գո՛գ-ցեաս իբրև գշխոյ իմն մեծացեալ և բազմեալ 'ի գահաւորակ բարձր և իշխանապանծ յաթոռ , կառուցեալ է այս Մենաստան 'ի պարտս շխթայակապ միոյ լերանց Կարնոյ , յինքն ունելով Եկեղեցին Նորաշէն յորոյ 'ի գմբէթս ամբառնայ քառաթև Խաչ ճաճանճաւոր , Առաջի դրան Եկեղեցւոյն շինեալ է և զանկա-գաւուն փայտեայ փառաւոր 'ի տէօքմէճի Հայկազնեայ յարհեստաւորաց Բաղաքին , Եկեղեցին Նորաշէն և քառակուսի կրամած կղմնորաւ գործեալ և , զարդարեալ զոյնզգոյն լամպայիւք , և շուշանազարդ շղթայիւք առ-

կախեալ չահք բիւրեղնեայք, յորոց թել 'ի թելս ծածանեալ ճօճային հատուածակողմա-պակիք բեկբեկելով 'ի շող ծերանի ղոյս արևու։ Ի հարաւակողմն Ս. Սեղանոյ Եկեղեցւոյս է հիւղ փոքրիկ, յորում գոյ խորաքիտ, ինչ նեռմ զորմէ աւանդեն ընակիչք տեղւոյն թէ յայսմ խորաքիտի մնացեալ դիշեր մի Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ։

Յերկոյ կողմանէ վանայս են զանազան դրունք սենեկաց, և 'ի կողմանէ հիւսիսոյ է սենեակ Գրիգորիս հանգուցեալ մեծագործ Եպիսկոպոսին Կ. Պոլսեցւոյ, որոյ վասն 'ի մահ քամեն զարուսար Կարնեցիքն ողջոյն, թիւ ամենեցուն սենեկաց վանուցս 30, ներքակեալ յամրապինդ պարսպաւոր 'ի հիւսիսոյ կողմանէ, առորմով նորաշէն Եկեղեցւոյն է գերեզման Սահակայ Ս.հագին Կաթողիկոսի։

Ս.յս Սահակ Կաթողիկոս Ս.հագին կոչեցեալ այր բանիբուն և դիտնական Պատրիարք Կ. Պոլսոյ ընտրի Կաթողիկոս 'ի 1770 ամի Փրկչին, և գայ 'ի Կարին ճեմելն 'ի վերայ պարբսպի վանացն Լուսաւորչայ չը դիտեմ առ յինչ պէտս մղի վերուստ 'ի վայր 'ի պարսպէ վանայն, 'ի Տիրասպան սպասաւորէ իւրմէ որոյ դիր հանդուռեան կարգի 'ի հիւսիսոյ կողմանէ ընդ որմով Տաճարին Սրբոյ՝ զարդարեալ մահարձանօք, այս այն Սահակ Ս.հագինն

է՝ օրոյ յորդորմամբ և նպաստիւք թարգմանեցաւ Գիրք օրինակաց և նմանութեանց Յոհաննու Սանճամինացւոյ՝ լաւին ընտիր քարոզչի և քաջ բնագիտի։

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻՍ
ԵՒ ՅԱՒԱԳԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆՆ

7585
7586
7587
7588
7589
7590

000 3646
000 3647
000 3648
000 3649
000 3650
000 3651